

## Տ. ՏԱՐՈՆ ԱԲԵՂԱ ՂՈՒԼԻԿՅԱՆ

(ավազանի անունը՝ Սանասար)

Ծնվել է 1976 թ. սեպտեմբերի 21-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1993-1996 թթ. սովորել է Շիրակի թեմի Ընծայարանում:

1996-2001 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001-2004 թթ. հոգևոր ծառայության է անցել Սամցխե-Ջավախքի Ընդհանուր Առաջնորդական Փոխանորդության Ծալկայի փարածաշրջանում որպես փեղի 13 հայկական գյուղերի հոգևոր սպասավոր:

2001 թ. հանձնելով առարկայական փարբերությունները՝ ընդունվել և 2003 թ. ավարտել է Երևանի Տնտեսա-իրավագիտական համալսարանի (Ախալքալաքի մասնաճյուղ) իրավաբանական ֆակուլտետը:

2004 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 25-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերենճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա :